ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N ՄԽ-03

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնում թեկնածուի ընտրության Մրցութային խորհրդի

Թիվ 3 նիստի

19-ը փետրվարի 2025թ.

Աժ 314 սենյակ, ժ.15:00

Ս.թ. փետրվարի 19-ին տեղի ունեցավ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնում թեկնածուի ընտրության Մրցութային խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) հերթական նիստը, հետևյալ օրակարգով՝

Օրակարգ՝

1. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնում թեկնածուի ընտրության մրցույթի հավակնորդների բարեվարքության վերաբերյալ ուսումնասիրություն իրականացնելու նպատակով կատարված հարցումների պատասխանների ուսումնասիրություն,
2. Մրցութային խորհրդի անդամների կողմից հավակնորդների վերաբերյալ զեկույցների ներկայացման բաշխումը,
3. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնում թեկնածուի ընտրության համար մրցույթի հարցազրույցի փուլի անցկացման օրվա, ժամի և տեղի սահմանում:

Խորհրդի բոլոր հինգ անդամները մասնակցում էին նիստին: Նիստը վարում էր՝ Արթուր Հովսեփյանը:

Նիստին մասնակցում էր նաև Աժ աշխատակազմից Դիաննա Աթոյանը՝ նիստի արձանագրումն ապահովելու համար:

Օրակարգի 1-ին հարց	Ա. Ջուլիակյանը ներկայացրեց Մարիաննա Բաղինյանի և Գարիկ Մինասյանի բարեվարքության վերաբերյալ ուսումնասիրություն իրականացնելու նպատակով կատարված հարցումների պատասխանները :
Խորհրդի որոշումը	*Խորհուրդը ուսումնասիրեց Մարիաննա Բաղինյանի և Գարիկ Մինասյանի բարեվարքության ստուգման նպատակով իրականացված հարցումների պատասխանները:*
Օրակարգի 2-րդ հարց	Խորհուրդը որոշեց անցկացնել վիճակահանություն և պարզել թե խորհրդի անդամներից ովքեր են հավակնորդների վերաբերյալ զեկույցով հանդես գալու:
Խորհրդի որոշումը	*Խորհուրդը վիճակահանությամբ որոշեց, որ* *Մարիաննա Բաղինյանի վերաբերյալ զեկույցը կներկայացնի Սոնա*

	Խալաֆյանը *Գարիկ Մինասյանի վերաբերյալ զեկույցը կներկայացնի Հարութ Ակլունցը* *Կողմ 5 դեմ 0*
Օրակարգի 3-րդ հարց	Հաշվի առնելով, որ խորհուրդը ուսումնասիրեց Մարիաննա Բաղինյանի և Գարիկ Մինասյանի բարեվարքության ստուգման նպատակով իրականացված հարցումների պատասխանները՝ որոշվեց սահմանել հարցազրույցի անցկացման օրը, ժամը և տեղը:
Խորհրդի որոշումը	*Խորհուրդը որոշեց Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնում թեկնածուի ընտրության համար մրցույթի հարցազրույցի փուլը անցկացնել փետրվարի 28-ին ժամը 10:00-ին, Ազգային ժողովում, 314 սենյակում:* *Կողմ 5 դեմ 0*

Նիստը վարող՝ Ա. Հովսեփյան

Նիստի քարտուղար՝ Դ.Աթոյան